

**ՀՀ ԿԳՄՄՆ «ԵՊՀ-ԻՆ ԱՌԸՆԹԵՐ Ա.ՇԱՀԻՆՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՖԻԶՄԱԹ ՀԱՏՈՒԿ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿ-Ի
2021-2026 Թ.Թ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

Հավակնորդ՝ Արման Սարգսյան

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ.....	3
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ	4
1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.....	5
2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	6
3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ	8
4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ 9	
4.1. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ 4 ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....	15
5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	17
6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ	19
7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	30
8. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ	30

ՆԱԽԱԲԱՆ

Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ:

Մեր երկիրը թևակոխվել է անկախության 3-րդ տասնամյակը, մենք ապրում ենք տնտեսական և սոցիալական արմատապես նոր միջավայրում, որը թելադրում է նոր կրթական պայմաններ:

Կրթության բնագավառի, մասնավորապես հանրակրթական դպրոցի գերխնդիրը շարունակում է մնալ կրթության որակի բարելավումը: Այդ գերխնդրի իրականացման համար դպրոցում պետք է նախադրյալներ ստեղծել և ձերբազատվել նախկին, այսօր արդեն ոչ արդյունավետ գործունեությունից և դպրոցի զարգացումը ապահովել կառավարելի, գիտականորեն հիմնավորված նորովի մոտեցումներով:

□ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 2021-2026 թ.թ.-ի զարգացման ծրագիրը□ նախնական աշխատանքային փաստաթուղթ է, հիմնված ներկայիս վիճակի վերլուծության, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացրած հանրակրթության առաջնահերթությունների, դպրոցի համակազմի և համայնքի կարիքների բացահայտման և ապագայի ցանկալի տեսլականին հասնելու քայլերի, ակնկալվող արդյունքների ներկայացմամբ:

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Կայուն զարգացման բոլոր նպատակադրումներում իրապես կարևորվում է կրթության դերը, որն իր բովանդակությամբ ու ձևերով պետք է համապատասխանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առաջ կանգնած երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացմանը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ
2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ
4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ
5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ
6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ
7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
8. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Հանրակրթական դպրոցի առաքելությունը սովորողներին ազգային հենքի վրա տարրական, հիմնական և միջնակարգ որակյալ կրթություն տալն է:

Ֆիզմաթ դպրոցի հիմնական առաքելությունը հետևյալն է՝

1. Ֆիզիկամաթեմատիկական և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում սովորողների մոտ կարողանալ ապահովել կրթական բարձր մակարդակ:
2. Միջազգային ասպարեզում մրցունակ սովորողների կրթական մակարդակի ապահովում:
3. Իր փորձով, մանկավարժական և գիտական ներուժով օգտակար լինել ՀՀ-ում հանրակրթության որակների բարձրացմանը:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցը ստեղծվել է 1965 թ. ՀՀ կառավարության որոշմամբ: Դպրոցը միջև 1984թ. սեպտեմբերի 1-ը գործել է ք. Երևան, Ալեք Մանուկյան /Մռավյան/ 9 հասցեում, իսկ 1984 թվից՝ ք.Երևան, Ազատության պող., 2-րդ նրբ., 9 հասցեում: Դպրոցի ընդունելությունը կազմակերպվում է քննությունների /հարցազրույցների/ միջոցով՝ 7-րդ դասարանից սկսած: 1989 թվից ԼՂՀ-ի Ստեփանակերտ քաղաքում դպրոցն ունի իր մասնաճյուղը:

Դպրոցն ունի ուսումնական, ննջարանային մասնաշենքեր, ճաշարան, հանդիսությունների դահլիճ, գրադարան, կաթսայատուն, սպորտային դահլիճ և մարզահրապարակներ: Դպրոցում գործում է ջեռուցման համակարգ:

Դպրոցն ունի չորս համակարգչային կաբինետ: Ֆիզիկայի և քիմիայի ժամանակակից երկու լաբորատորիաներ:

Դպրոցի տարածքը պարսպապատված և բարեկարգված է, ունի ոռոգման ջուր:

1995-1997 թթ. դպրոցի ուսումնական և ննջարանային մասնաշենքերը հիմնանորոգվել են: Հանդիսությունների դահլիճը վերանորոգվել է 2014թ., իսկ ճաշարանը և գրադարանը՝ 2016 թվին:

Դպրոցն ունի 127 աշխատակիցներ, որոնցից 4-ը վարչական, 79-ը մանկավարժական և 44-ը ուսումնաօժանդակ:

Դպրոցում աշխատում են 4 վաստակավոր, 5 ուսուցչի երկրորդ և 17 ուսուցչի առաջին տարրակարգ ունեցող մանկավարժներ, 15 գիտությունների թեկնածուներ և 1 գիտությունների դոկտոր:

Դպրոցում գործում են մաթեմատիկայի 5, ֆիզիկայի 4, աստղագիտության 1, ինֆորմատիկայի 3 օլիմպիական խմբակներ:

Միայն վերջին չորս տարիների ընթացքում դպրոցի աշակերտները միջազգային օլիմպիադաներից վերադարձել են 81 մեդալներով, որից 9 ոսկե, 21 արծաթե և 51 բրոնզե:

Համաձայն լիցենզիայի՝ ՀՀ ԿԳՄՍ «ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն իրավունք ունի իրականացնելու հետևյալ կրթական ծրագիրը.

- Հիմնական հանրակրթական ծրագրով- 335 սահմանային տեղ
- Միջնակարգ հանրակրթական ծրագրով -410 սահմանային տեղ:

2021-2022 ուսումնական տարում դպրոցն ունի 732 սովորող՝ ձևավորված 26 դասարաններում:

ՅՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ուսումնական հաստատության գործունեության վերլուծությունը կատարել և այդ վերլուծության հիման վրա սահմանել եմ նպատակներ, ըստ հետևյալ ոլորտների.

- Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան
- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը
- Կառավարման և խորհրդակցական մարմինները
- Աշակերտական համակազմը
- Մանկավարժական համակազմը
- Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
- Ուսումնական միջավայրը
- Կրթության որակը
- Նորագույն տեխնոլոգիաները և նորարարությունները

4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ ԿԳՄՄ «ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հաստուկ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար իրականացնենք իրավիճակի ՈԻԹՀԽ (SWOT) վերլուծություն. Բացահայտենք դպրոցի ուժեղ ու թույլ կողմերը, հնարավորություններն ու հնարավոր խոչընդոտները՝ այն ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտել խնդիրների լուծման ընթացքում:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p><i>Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</i></p>	<p><i>Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Հաստատության տարածքը ցանկապատված և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար. ✚ Ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկից, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական կամ այլ օբյեկտներից ✚ Արտակարգ իրավիճակներում հաստուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ հաստատության շենքին. ✚ Ուսումնական հաստատության տարածքը մաքուր է, իսկ 	<ul style="list-style-type: none"> ✚ Ուսումնական հաստատության կանաչ տարածքները մասնակիորեն բարեկարգ վիճակում չեն. ✚ Անհրաժեշտություն կա բուժկետը համալրելու անհրաժեշտ սարքավորումներով. ✚ Ուսումնական հաստատությունը մասնակի վերանորոգման կարիք ունի. ✚ Բացօթյա մարզահրապարակները մասնակի վերանորոգման կարիք ունեն ✚ Կա նոր համակարգիչների ձեռքբերման անհրաժեշտություն ✚ համակարգչային սենյակը համալրված չէ դյուրակիր համակարգիչներով, էլեկտրոնային գրատախտակով .

լաբորատորիաներում օգտագործվող այրվող և այլ վտանգավոր նյութերի թափոնները, աղբը կանոնավորապես հավաքվում են հատուկ աղբարկղներում և դուրս են բերվում հաստատության տարածքից.

✚ Ուսումնական հաստատության մասնաշենքերը ուսումնական գործընթաց կազմակերպելու համար ունեն բավարար պայմաններ ունեն: Ուսումնական հաստատությունն ունի գործող և բավարար ֆիզիկական պայմաններով գրադարան.

✚ Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության, ինֆորմատիկայի լաբորատորիաներ

✚ Առկա է բարեկարգված նիստերի դահլիճ՝ ինտերակտիվ պրոյեկտորով:

✚ Առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր:

✚ Հաստատությունը ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով, դասասենյակներում, միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ՝ սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան ջերմաստիճանով: Հաստատության միջանցքները ջեռուցվում են, և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին:

<ul style="list-style-type: none"> ✚ Առկա է բուժկետ, որտեղ կարող է տրամադրվել առաջին բուժօգնությունը: 	
<p><i>Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը</i></p>	<p><i>Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն մուտքերը ✚ Բյուջեի նպատակային օգտագործում, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր անհրաժեշտ ծախսերը: ✚ Կատարված ծախսերի թափանցիկության ապահովում: ✚ Արտաբյուջետային միջոցների մուտքեր ✚ Վերջին երեք տարիներին սովորողների թվի աստիճանական աճով պայմանավորված բյուջեից ֆինանսավորման աճը: 	<ul style="list-style-type: none"> ✚ Համայնքում գործող իրավաբանական անձից երաշխավորված դրամական հատկացումների բացակայությունը
<p><i>Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը</i></p>	<p><i>Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք վարվում են կարգերի պահանջներին համապատասխան 	<ul style="list-style-type: none"> ✚ Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի բացակայությունը

<p>Կառավարման և խորհրդակցական մարմինները</p>	<p>Կառավարման և խորհրդակցական մարմինները</p>
<p> <ul style="list-style-type: none"> ✚ Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները: </p>	<p> <ul style="list-style-type: none"> ✚ Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ ✚ Դասարանական ծնողական խորհուրդների մասնակցությունը դպրոցական կյանքին հիմնականում բացակայում է՝ ծնողական համայնքը պասիվ է </p>
<p><i>Մանկավարժական համակազմը</i></p>	<p><i>Մանկավարժական համակազմը</i></p>
<p> <ul style="list-style-type: none"> ✚ Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ ✚ Որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների առկայությունը ✚ Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ </p>	<p> <ul style="list-style-type: none"> ✚ Գրեթե բացակայում է սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառումը ուսուցիչների կողմից ✚ Ուսումնառժանդակ կազմի աշխատանքը նախաձեռնողական բնույթ չի կրում: </p>
<p><i>Աշակերտական համակազմը</i></p>	<p><i>Աշակերտական համակազմը</i></p>

<ul style="list-style-type: none"> ✚ Սովորողները արտադասարանական միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ✚ Արտադպրոցական տարբեր խմբակներում ունեն մեծ ներգրավվածություն ✚ Ունեն նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով աշխատելու մեծ պատրաստակամություն 	<ul style="list-style-type: none"> ✚ Աշակերտների ինքնագնահատման ոչ օբյեկտիվ լինելը ✚ Դպրոցի ավարտական (12-րդ) դասարաններում նվազում է սովորողների՝ հանրակրթական առարկաների յուրացման ձգտումը՝ պայմանավորված բուհ ընդունվելու համար անհրաժեշտ առարկաների նկատմամբ ուշադրության մեծացմամբ:
<p style="text-align: center;"><i>Հաղորդակցություն, համագործակցություն</i></p>	<p style="text-align: center;"><i>Հաղորդակցություն, համագործակցություն</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Դասավանդման ընթացքում հմուտ ուսուցիչներն աշակերտների միջև ստեղծում են փոխհամագործակցության կապեր ✚ Դպրոցի բոլոր սուբյեկտները(խորհուրդները) համագործակցում են միմյանց հետ ✚ Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, համայնքի և այլ հիմնական դպրոցների, ԱԻՆ-ի, զորամասերի, ոստիկանության, և այլ կառույցների հետ ✚ Համագործակցում և աջակցություն ք ցուցաբերում 5 դպրոցների 	<ul style="list-style-type: none"> ✚ Համագործակցություն հասարակական կազմակերպությունների հետ, միջազգային կազմակերպությունների հետ
<p style="text-align: center;"><i>Ուսումնական միջավայրը</i></p>	<p style="text-align: center;"><i>Ուսումնական միջավայրը</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Հաստատությունն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության, 	<ul style="list-style-type: none"> ✚ Ուսումնական միջավայրը անընդհատ համալրման և բարեկարգման կարիք

<p>ինֆորմատիկայի լաբորատորիաներ</p> <ul style="list-style-type: none"> ✚ Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ, սարքավորումներով ✚ Առկա է 1 ինտերակտիվ գրատախտակներով դասասենյակ 	<p>ունի</p>
<p><i>Կրթության որակը</i></p>	<p><i>Կրթության որակը</i></p>
<ul style="list-style-type: none"> ✚ Կրթության բարձր որակ ավահովելով և մասնագիտացված ուսուցում կազմակերպելով սովորողները հնարավորություն են ունենում կոտրել կարծրատիպերը՝ ինքնուրույն(առանց կրկնուսույցի) հանձնելով միասնական քննությունները ✚ ԲՈՒՀ ընդունված շրջանավարտների տոկոսը բարձր է 	<ul style="list-style-type: none"> ✚ Միջառարկայական համագործակցության ու լրացուցիչ կրթության գրեթե բացակայությունը ✚ Ցածր իրավագիտականություն ունեցող սովորողների խնդիրը:
<p><i>Նորագույն տեխնոլոգիաները և նորարարությունները</i></p>	<p><i>Նորագույն տեխնոլոգիաները և նորարարությունները</i></p>
<p>-</p>	<ul style="list-style-type: none"> ✚ «Էկո » ծրագրերի բացակայություն <ul style="list-style-type: none"> • «Թուղթը աղբ չէ» հասարակական նախաձեռնության մասնակցություն • «Պլաստիկը աղբ չէ» հասարակական նախաձեռնության մասնակցություն

	<ul style="list-style-type: none"> ✚ Արևի ջերմության օգտագործումը որպես էլեկտրաէներգիայի աղբյուր չի օգտագործվում
Հնարավորություններ	Խոչընդոտներ (վտանգներ)
<ul style="list-style-type: none"> ✚ Ուսուցչական համակազմի գերակշռող մասի պատրաստակամությունը ✚ Շենքային բավարար պայմանները ✚ Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունը ✚ Տինանսական գործընկերներ(հովանավորներ) ձեռք բերելու բարձր հավանականությունը 	<ul style="list-style-type: none"> ✚ Սոցիալական վիճակի օրեցօր վատթարացումը ✚ Արտագաղթը ✚ Պատերազմը ✚ Համավարակը

4.1. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ՆԱԽՈՐԴ 4 ՈՒՍՏԱՐԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ 4 ուստարիների համար

դասարան	2021-2022	2020-2021	2019-2020	2018-2019
7-րդ	3	3	2	3
8-րդ	5	3	4	4
9-րդ	3	4	4	4
10-րդ	5	5	5	5
11-րդ	5	5	5	5
12-րդ	5	5	5	4
Ընդամենը	26	25	25	25

Ընդհանուր տվյալներ ուսուցիչների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ 4 ուստարիների համար

	2021-2022	2020-2021	2019-2020	2018-2019
Ընդամենը	58	58	60	57
Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը	17,1	16,4	15,8	16,5

Սովորողների թիվը՝ ընթացիկ և նախորդ 4 ուստարիների համար

ընդամենը



2017-2018
ՈՒՍԱՐԻ

2018-2019
ՈՒՍԱՐԻ

2019-2020
ՈՒՍԱՐԻ

2020-2021
ՈՒՍԱՐԻ


2021-2022
ՈՒՍԱՐԻ

—●— ընդամենը

5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառայած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

**Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝
հիմնվելով մի քանի ելակետային դրույթների վրա:**



Ելնելով նշված դրույթներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից՝ պետք է՝

1. Ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար
2. Մասնագիտացված դպրոցի կայացմանն ուղղված աշխատանքներ
3. սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ

- ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան
 - ժամանակակից տեխնոլոգիաներով և սարքավորումներով հագեցած լաբորիատորիաների ստեղծում: Արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը
4. Խմբակների ղեկավարների պատրաստմանն ուղղված գործունեություն
 5. Ստեղծել դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթ
 6. Դպրոցականների առարկայական հանրապետական և միջազգային օլիմպիադաների ակտիվ մասնակցություն:
 7. Արդյունավետ օգտագործել ֆինանսները
 8. Ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացում նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ,
 9. Ստեղծել նպաստավոր պայմաններ կոմպետենտ քաղաքացիների ձևավորման և զարգացման համար
 10. Համագործակցության ակտիվացում
 - Դպրոցին կցված սահմանամերձ հինգ դպրոցների հետ աշխատանքների կազմակերպում:

6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

№ / №	Գործողություններ	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսերը
1	2	3	4	5
1.	Դպրոցում սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում (հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային)	Տնօրինություն, համայնքի համապատասխան բաժինների աշխատակիցներ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, զինղեկ, բժիշկ, դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ ըստ առաջնահերթությունների և ֆինանսների բաշխման հնարավորություններին:	Դպրոցի բյուջեի միջոցներով
2.	Ուսումնական հաստատության կանաչ տարածքների բարեկարգում	Տնօրինություն, համայնքի համապատասխան բաժինների աշխատակիցներ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ ըստ առաջնահերթությունների և ֆինանսների բաշխման հնարավորություններին:	Դպրոցի բյուջեի և համայնքի միջոցներով
3.	Ուսումնական հաստատությունը մասնակի վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ	Տնօրեն, տեխնիկական անձնակազմ, հրավիրված աշխատակիցներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և արտաբյուջեի միջոցներով, ներգրավել բարերարների օգնություններ կամ փորձել դրամաշնորհի ստանալ
4.	Բուժկետը համալրել անհրաժեշտ սարքավորումներով	Տնօրեն, բուժքույր	Ծրագրի իրականացման առաջին տարում	Դպրոցի բյուջեի միջոցներով
5.	Առարկայական կաբինետների նյութատեխնիկական բազայի համալրում	Տնօրեն, համայնք, ԿԳՄՄՆ, ՕԻԳ, ԿՏԱԿ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Բարերարների և օգնությունների միջոցով

6.	Ձեռնահարկում ստեղծվող հինգ ինժեներական լաբորատորիաների նյութատեխնիկական բազայի համալրում, լաբորատորիաների աշխատանքների կազմակերպում	Տնօրեն, ամբիոններ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և «Ֆիզմաթ դպրոցի բարեկամ» բարեգործական հիմնադրամի միջոցներով
7.	Նոր համակարգիչների ձեռքբերում	Տնօրեն, համայնք, ԿԳՄՄՆ, ԾԻԳ, ԿՏԱԿ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի միջոցներով, ներգրավել բարերարների օգնություններ կամ փորձել դրամաշնորհի ստանալ
8.	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքներ	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
9.	Աշակերտների ինքնագնահատման, ինքնաստուգման կարողությունների զարգացմանը միտված աշխատանքների կատարում	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
10.	Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
11.	սովորողների մոտ առողջ ապրելակերպի մշակույթ ձևավորելուն ուղղված միջոցառումներ	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
12.	Ամենօրյա պայքարել ծխելու և այլ վտանգավոր սովորույթների դեմ	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

13.	կրթության և դաստիարակության գործընթացում համագործակցել դպրոցի բժշկի, հոգեբանի և ֆիզկուլտուրայի ուսուցիչների հետ	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
14.	սովորողների ֆիզիկական և առողջական վիճակի ուսումնասիրության նպատակով սերտորեն համագործակցել դպրոցի բժշկի հետ	Տնօրեն, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
15.	մանկական հիվանդությունների կանխարգելման նպատակով համագործակցել արտադպրոցական բժշկական հաստատությունների հետ	Տնօրեն, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
16.	հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ ուղղված դժբախտ պատահարներից պաշտպանվելու երեխաների կարողությունների ձևավորմանը	Տնօրեն, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ, ՆԶՊ ուսուցիչ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
17.	միջոցառումների, գեկուցումների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ակոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ) և դրանց վտանգավորությանը	Տնօրեն, մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալ, ԴԱԿ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
18.	Դպրոցի սպորտային բազայի հարստացում	Տնօրեն, համայնք, ԿԳՄՄՆ, ԾԻԳ, ԿՏԱԿ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և արտաբյուջեի միջոցներով, ներգրավել բարերարների օգնություններ կամ փորձել դրամաշնորհի ստանալ

19.	Բարեգործ-բարերարների, հովանավորների ներգրավման աշխատանքներ	Տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
20.	Լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ձեռնարկատիրական գործունեության իրականացում	Տնօրեն, ուսուցչական կազմ, հրավիրված մասնագետներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
21.	Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների, նրանց գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
22.	կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
23.	ձևավորել դպրոցի հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդ (համայնքում գործող իրավաբանական անձից երաշխավորված դրամական հատկացումների հայթայթում)	Տնօրեն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
24.	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման առաջին տարում	-
25.	Խորհրդակցական մարմինների իրավագիտակության բարձրացմանը ուղղված սեմինարների շարք	Տնօրեն, կառավարման խորհրդի նախագահ, խորհրդակցական մարմինների նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

26.	սոցիալական ծրագրերի իրականացում	Տնօրինություն, ծնողներ, վարչական տարածքի ղեկավար, ուսուցիչներ, սովորողներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
27.	դպրոցի գործունեության վիճակի, հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին հանդիպումների, քննարկումների կազմակերպում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ տարին առնվազն մեկ անգամ	-
28.	ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ պարբերաբար	-
29.	Ծնողների ակտիվ ներգրավվածության կազմակերպում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ պարբերաբար	-
30.	ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում	Տնօրինություն, մանկապահներ, ուսուցիչներ,	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ պարբերաբար	-
31.	ուսուցիչների մեջ ձևավորել սովորողների կարողությունների և հմտությունների ձեռքբերման և իրավական գիտակցությունը ուսուցման գործընթացում բարձրացնելու հմտություններ	Տնօրինություն, մանկապահներ, ուսուցիչներ,	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ պարբերաբար	-

32.	ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
33.	որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչների համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանին հասնելու համար	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
34.	կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ. վերապատրաստումների միջոցով զարգացնել ուսուցիչների դասավանդման հմտությունները	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի միջոցներով
35.	ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
36.	ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից, այդ նպատակով կազմակերպել դասընթացներ	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և արտաբյուջեի միջոցներով

37.	աջակցել մանկավարժներին իրենց մեթոդական աշխատանքների արդյունքներին վերաբերող նյութերը մշակելու և տպագրելու գործում, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը և ինքնազարգացմանը	Տնօրինություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
38.	Շարունակել մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների գիտամեթոդական ամենամյա գիտաժողովի կազմակերպումը և նյութերի ժողովածուի հրատարակումը:	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
39.	ուսուցիչների կողմից սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
40.	փոխադարձ դասալսումների ակտիվացում	Տնօրինություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
41.	բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, միջավայրի ֆիզիկական խոչընդոտների վերացում, հավասար հնարավորությունների ստեղծում	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում՝ պարբերաբար	-
42.	ներգրավվածությունը «Իթվինինգ պլյուս» ծրագրին	Տնօրինություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

43.	Գիտելիքների մատուցում՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
44.	Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ միջազգային պահանջներին համապատասխան:	Տնօրինություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
45.	Ուժեղացնել և ավելի բովանդակային դարձնել միջառարկայական համագործակցությունն ու լրացուցիչ կրթությունը:	Տնօրինություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
46.	Պարբերաբար ճշտել դպրոցին կցված սահմանամերձ հինգ դպրոցների առկա կրթական խնդիրները: Կատարել օժանդակող տարբեր աշխատանքներ:	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
47.	Յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ այցելել համակցված դպրոցներ: Դպրոցներին և ուսուցիչներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն:	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
48.	Հանդես գալ նոր նախաձեռնությամբ՝ իրականացնել ՀՀ վարժարանների ու ավագ դպրոցների մաթեմատիկայի և ֆիզիկայի ուսուցիչների վերապատրաստումներ	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
49.	ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախազգծված դասղեկական պլանների վրա	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

50.	մշտապես մոնիթորինգի ենթարկել, վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը և բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
51.	ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սովորողների, ինչպես նաև սովորողների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն ապահովելու, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
52.	յուրաքանչյուր սովորողի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվարություններ ունեցող երեխաների հետ	Տնօրինություն, ՈԻԱԳ տեղակալ մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
53.	Նոր մոտեցումներ ցուցաբերել ՏՏ ոլորտի և ծրագրավորման բարձրակարգ սովորողներ կրթելու համար: Համագործակցել ԲՈւՀ-երի համապատասխան ֆակուլտետների և ՏՀՏ գործատուների միության հետ:	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
54.	դասղեկի ժամերի և արտադասարանական միջոցառումների միջոցով իրականացնել բարոյական և հայրենասիրական դաստիարակության ծրագրեր	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

55.	ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
56.	մշտապես կարևորել ինքնադաստիարակությունը. աշխատանքները կազմակերպել այնպես, որ սովորողների մոտ ինքնուրույն վերափոխվելու ցանկություն արթնանա	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
57.	ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
58.	Պարբերաբար զարգացնել olymp.am կայքը	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
59.	կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական զրույցներ	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
60.	ապահովել առարկայական ուսուցիչների և հոգեբանների կամ այլ համապատասխան մասնագետների կողմից խորհրդատվության տրամադրումը	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
61.	ծնողների և երեխաների համատեղ մասնակցությամբ պարբերաբար անցկացնել միջոցառումներ	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-

62.	ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները,	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
63.	Համակարգել օլիմպիական խմբակների աշխատանքները: Ստեղծել նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ ինժեներական խմբակներ:	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և «Ֆիզմաթ դպրոցի բարեկամ» բարեգործական հիմնադրամի միջոցներով
64.	Շարունակել ամենամյա մասնակցությունը ՂՀ Ալմաթի քաղաքում կազմակերպվող Ժառուտիկոլյան և Մոսկվայում կազմակերպվող փորձարարական ֆիզիկայի միջազգային օլիմպիադաներին:	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	Դպրոցի բյուջեի և «Ֆիզմաթ դպրոցի բարեկամ» բարեգործական հիմնադրամի միջոցներով
65.	Համագործակցություն այլ մարզերի դպրոցների հետ, հասարակական կազմակերպությունների հետ, միջազգային կազմակերպությունների հետ	Տնօրինություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ամբողջ ընթացքում	-
66.	«Էկո » ծրագրերի իրականացում	Տնօրեն	Ծրագրի իրականացման չորրորդ տարում	Դպրոցի բյուջեի և արտաբյուջեի միջոցներով, ներգրավել բարերարների օգնություններ կամ փորձել դրամաշնորհի ստանալ
67.	Արևի ջերմության օգտագործումը որպես էլեկտրաէներգիայի աղբյուր	Տնօրեն	Ծրագրի իրականացման հինգերորդ տարում	Դպրոցի բյուջեի և արտաբյուջեի միջոցներով, ներգրավել բարերարների օգնություններ կամ փորձել դրամաշնորհի ստանալ

7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՌԻՍԿԵՐԸ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Նորամուծությունների մերժում	Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
Մոտիվացիայի ցածր մակարդակ	Ներդնել խրախուսանքի համակարգ
Իրազեկվածության ոչ բավարար մակարդակ	Մշտապես ծանոթացնել ոլորտի նորություններին, քաջալերել նախաձեռնողներին
Ֆինանսական միջոցների կառավարման բարդացված գործընթաց	Գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ
Մշակութային կարծրատիպեր	Կոտրել կարծրատիպեր

8. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԱՓԱՆԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած, դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ (դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները) գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.

- ✓ դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան երկու անգամ դպրոցի սվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- ✓ դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրումը,
- ✓ համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
- ✓ դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- ✓ զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,

- ✓ յուրաքանչյուր ուստարվա սկզբին տարեկան աշխատանքային պլանի մշակում,
- ✓ յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,
- ✓ յուրաքանչյուր ուստարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից: